ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1087.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 8-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 1 հոկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Արտակ Զեյնալյանի (այսուհետ նաև՝ Դիմող) և նրա ներկայացուցիչ՝ փաստաբան Աշխեն Դաշյանի,*

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող) աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին:

Օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ **«Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները»** վերտառությամբ 1087.1-ին հոդվածի 8-րդ մասը սահմանում է.

«8. Զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել»:

Օրենսգիրքը 1087.1-ին հոդվածով լրացվել է 18.05.2010 թ. ՀՕ-97-Ն օրենքով, վիճարկվող դրույթը փոփոխվել է 24.03.2021 թ. ՀՕ-330-Ն օրենքով, համաձայն որի՝ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի «2000» թիվը փոխարինվել է «6000» թվով:

Գործի քննության առիթն Արտակ Զեյնալյանի՝ 2024 թվականի ապրիլի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը 2024 թվականի մայիսի 14-ի ՍԴԱՈ-82 աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունել «Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի և «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը: Սահմանադրական դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 1-ի ՍԴԱՈ-146 աշխատակարգային

որոշմամբ գործի վարույթը մասամբ՝ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի մասով, կարճվել է:

Ուսումնասիրելով դիմումը, Դիմողի և Պատասխանողի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով վիճարկվող և վերաբերելի օրինադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Գործի դատավարական նախապատմությունը

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), քննելով թիվ ԵԴ/9074/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի Արտակ Հայկազի Զեյնալյանի ընդդեմ Գայանե Բենյամինի Առուստամյանի, երրորդ անձ՝ Մարինա Հրանտի Պողոսյան՝ զրպարտող տեղեկությունը հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում բռնագանձելու պահանջների մասին, 2020 թվականի դեկտեմբերի 18-ին վճռել է.

«Արտակ Հայկազի Զեյնալյանի հայցն ընդդեմ Գայանե Բենյամինի Առուստամյանի, երրորդ անձ՝ Մարինա Հրանտի Պողոսյան՝ զրպարտող տեղեկությունը հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում բռնագանձելու պահանջների մասին, բավարարել՝ մասնակի:

Գայանե Բենյամինի Առուստամյանից հօգուտ Արտակ Հայկազի Զեյնալյանի բռնագանձել 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցման գումար:

Հայցը մնացած մասով մերժել:

Գայանե Բենյամինի Առուստամյանից հօգուտ Արտակ Հայկազի Զեյնալյանի բռնագանձել 90,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Գայանե Բենյամինի Առուստամյանից հօգուտ Արտակ Հայկազի Զեյնալյանի բռնագանձել 2,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

(…)»:

1.2. Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, գրավոր ընթացակարգով քննելով Արտակ Զեյնալյանի վերաքննիչ բողոքը՝ Դատարանի 18.12.2020 թ. վճռի՝ հայցի մերժված մասի դեմ, 2021 թվականի մայիսի 21-ին որոշել է.

«1. Վերաքննիչ բողոքը բավարարել:

ԵԴ/9074/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 18.12.2020 թվականի վճիռը մասնակի՝ հայցը մերժելու մասով, բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նշված ծավալով նոր քննության:

(…)»:

1.3. Դատարանը, քննելով թիվ ԵԴ/9074/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի Արտակ Հայկազի Զեյնալյանի ընդդեմ Գայանե Բենյամինի Առուստամյանի, երրորդ անձ՝ Մարինա Հրանտի Պողոսյանի՝ զրպարտող տեղեկությունը հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում բռնագանձելու պահանջների մասին, 2022 թվականի հոկտեմբերի 18-ին վճռել է.

«1. Արտակ Հայկազի Զեյնալյանի հայցն ընդդեմ Գայանե Բենյամինի Առուստամյանի, երրորդ անձ՝ Մարինա Հրանտի Պողոսյանի՝ զրպարտող տեղեկությունը հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում բռնագանձելու պահանջների մասին, մերժել:

(…)»:

Հիշյալ վճռով Դատարանը նշել է. «Մինչ իրավական վերլուծությանը անցնելը դատարանը անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 21.05.2021 թվականի որոշմամբ մասնակի բեկանելով ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 18.12.2020 թվականի վճիռը՝ հայցը մերժելու մասով, սահմանել է քննության ծավալ՝ պարզել «Marina Poghosyan» «Gayane Arustamyan» Ֆեյսբուքյան օգտատերերը իրականացնում են լրատվական գործունեություն, թե ոչ, և պարզել պատասխանող Գայանե Առուստամյանի գույքային դրությունը:

Դատարանը «Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին» 23.09.2021 թվականի որոշմամբ Հայցվորին վերապահել է ապացուցելու «Marina Poghosyan» ֆեյսբուքյան օգտատիրոջ լրատվական գործունեությամբ զբաղվելու փաստը և Պատասխանողին՝ 2.000.000 ՀՀ դրամ վճարելը իր գույքային դրության տեսանկյունից անհամաչափ լինելը:

Հայցվորի ներկայացուցիչը գործի քննությամբ ընդունել է, որ Երրորդ անձը լրատվական գործունեությամբ չի զբաղվում, այլ զբաղվում է հասարակական գործունեությամբ, իսկ Պատասխանողի կողմից որևէ դիրքորոշում կամ ապացույց գույքային դրության մասով չի ստացվել:

(…)

Վերոգրյալ փաստական հանգամանքներից ելնելով Դատարանը արձանագրում է, որ «Marina Poghosyan» օգտատիրոջ՝ Երրորդ անձի, լրատվական գործունեությամբ զբաղվելու մասին փաստ չի ներկայացվել, ուստի 1087.1-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված միջոցը կատարելու պարտականություն չի կարող նրան վերապահվել»:

1.4. Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, գրավոր ընթացակարգով քննելով Արտակ Հայկազի Զեյնալյանի վերաքննիչ բողոքը՝ Դատարանի 18.10.2022 թ. վճռի դեմ, 2023 թվականի մարտի 22-ին որոշել է.

«1. Արտակ Հայկազի Զեյնալյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի. Մասնակի բեկանել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/9074/02/19 քաղաքացիական գործով 18.10.2022 թվականին կայացված վճիռը և այն փոփոխել հետևյալ կերպ.

«1. Արտակ Հայկազի Զեյնալյանի հայցն ընդդեմ Գայանե Բենյամինի Առուստամյանի, երրորդ անձ՝ Մարինա Հրանտի Պողոսյանի՝ զրպարտող տեղեկությունը հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում բռնագանձելու պահանջների մասին, բավարարել մասնակի.

Գայանե Բենյամինի Առուստամյանից հօգուտ Արտակ Հայկազի Զեյնալյանի բռնագանձել 500.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցման գումար:

2. Գայանե Առուստամյանից հօգուտ Արտակ Զեյնալյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված և բավարարված հայցապահանջի մասով պետական տուրքի գումար:

3. Գայանե Բենյամինի Առուստամյանից հօգուտ Արտակ Հայկազի Զեյնալյանի բռնագանձել 110.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար»:

Վճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:

(…)»:

Նույն որոշմամբ Վերաքննիչ դատարանը նշել է.

«(…) սույն գործի քննության ընթացքում ֆեյսբուքյան օգտատեր «Marina Poghosyan»-ի լրատվական գործունեությամբ զբաղվելու փաստը ապացուցված չլինելու

պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ վեճի առարկա հրապարակումը տեղի է ունեցել ֆիզիկական անձ «Marina Poghosyan»-ի ֆեյսբուքյան էջի միջոցով, որը չի կարող գնահատվել որպես լրատվության միջոց՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված տեղեկությունը չի կարող համարվել լրատվության միջոցով տարածված:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով սահմանված պաշտպանության միջոցի կիրառման հիմքը: Հետևաբար՝ այս առնչությամբ բողոքաբերի պատճառաբանությունները Վերաքննիչ դատարանի գնահատմամբ անհիմն են»:

1.5. Վճռաբեկ դատարանը, քննելով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 22.03.2023 թ. թվականի որոշման դեմ Արտակ Զեյնալյանի բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, 2023 թվականի հոկտեմբերի 11-ին որոշել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը, ներկայացնելով թիվ ԵԴ/9074/02/19 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը, շարադրելով վիճարկվող նորմերի բովանդակությունը, բարձրացված հարցադրումների վերաբերյալ Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան դիրքորոշումները, նշում է. «Օրենսդիրը վիրավորանքից և զրպարտությունից ոչ նյութական պաշտպանության կարգը և պայմանները տարբերակել է, տարբերակել է նաև արատավորող արտահայտությունից պաշտպանությունն՝ ըստ հրապարակման աղբյուրի»: Ըստ Դիմողի՝ վիրավորական արտահայտության դեպքում իրավունքի խախտման զոհն իրավասու է պահանջելու իրավախախտից հրապարակային ներողություն խնդրել, իսկ զրպարտության դեպքում՝ հերքում հրապարակել պայմանով, որ զրպարտող տեղեկությունը հրապարակվել, հանրայնացվել, տարածվել է «լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ»: Այս համատեքստում Դիմողն ընդգծում է. «Իսկ, թե՝ ո՞րն է «լրատվական գործունեություն իրականացնող» և հերքումն ի՞նչ ձևով կարող է հրապարակվել, որոշվում է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով»:

Դիմողը պնդում է, որ առկա իրավակարգավորումների համաձայն՝ եթե զրպարտությունը հրապարակվել, հանրայնացվել, տարածվել է բանավոր կերպով (առանց վերարտադրման հնարավորության) կամ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի իմաստով՝ «լրատվության միջոց» չհանդիսացող հարթակի միջոցով՝ վերարտադրման, տարածության և ժամանակի մեջ տարածման հնարավորությամբ, ապա իրավունքի խախտման զոհը հնարավորություն չունի զրպարտություն համարված փաստերը հերքելու, հրապարակումը հեռացնելու պահանջ ներկայացնելու իրավախախտին:

Դիմողը Սահմանադրական դատարանի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ տեղեկատվության տարածման ժամանակակից միջոցներով, մասնավորապես՝ սոցիալական ցանցում գրանցված օգտահաշվի միջոցով, տարածված տեղեկությունը մշտապես հրապարակվում, հանրայնացվում, տարածվում է: Հաճախ որոշ օգտահաշիվներ անհամադրելի քանակով հետևորդներ են ունենում, քան «լրատվության միջոցները»: Ավելին, Դիմողի գնահատմամբ, ժամանակակից տեղեկատվական համացանցային հոսքերի կառավարման ալգորիթմներն ապահովում են տեղեկատվության տարածումը նաև այն «սպառողների» շրջանում, որոնք կոնկրետ օգտատիրոջ կամ օգտահաշվի «հետևորդ» չեն, սակայն կարող են այդ բովանդակության պոտենցիալ «գնորդ» լինել: Դիմողի գնահատմամբ՝ 101 բաժանորդ ունեցող «լրատվության միջոցով» տարածված զրպարտության հետագա տարածումը դադարեցնելը, զրպարտությունը հեռացնելը, հերքում տարածելը՝ որպես իրավական պաշտպանության միջոցներ, նախատեսված են, սակայն միլիոնավոր հետևորդներ ունեցող օգտահաշվից՝ հնարավոր չէ:

Դիմողի կարծիքով՝ քանի դեռ առկա չէ անձի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկությունները հերքելու, հեռացնելու պաշտպանության միջոց, խախտումները կրելու են շարունակական բնույթ՝ անկախ դատական պաշտպանության դիմած անձի օգտին կայացված դատական ակտի առկայությունից: Ավելին, անձի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող հրապարակային ներկայացված փաստացի տվյալները չհերքվելու և չհեռացվելու պայմաններում դրանք շարունակելու են արատավորել անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը՝ հանգեցնելով նոր խախտման:

Դիմողի պնդմամբ՝ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասը չի նախատեսում զրպարտությունը սոցիալական հարթակի օգտահաշվից հեռացնելու, նույն վայրում հերքում հրապարակելու կարգ ու պայման, իսկ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 3-րդ հոդվածը սոցիալական հարթակում գործող օգտահաշիվը չի դիտարկում որպես լրատվության միջոց:

Դիմողը շեշտադրում է, որ մարդը բարձրագույն արժեք է, և նրա պատիվը, արժանապատվությունը և բարի համբավն արատավորելուց պաշտպանելը, մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելը, հնարավոր չէ ֆինանսական փոխհատուցմամբ: Հակառակ իրավիճակը, ըստ Դիմողի, կստեղծի նյութական հատուցման միջոցներ տրամադրելով ոչ նյութական բարիքների դեմ անարգել ոտնձգելու հնարավորություն, ինչը կհակասի մարդու արժանապատվության բարձրագույն արժեք լինելու գաղափարին, կդրդի մարդուն դիմելու իր իրավունքը պաշտպանելու հնագույն բնական միջոցին՝ իրավունքի ինքնապաշտպանությանը:

Արդյունքում Դիմողը եզրակացնում է, որ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասը, չնախատեսելով զրպարտությունը սոցիալական հարթակի օգտահաշվից հեռացնելու, նույն վայրում հերքում հրապարակելու կարգ ու պայման, և «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 3-րդ հոդվածը, սոցիալական հարթակում օգտահաշիվը չդիտարկելով որպես լրատվության միջոց, չեն համապատասխանում Սահմանադրության 3, 23, 31, 61, 63 և 75-րդ հոդվածներով ամրագրված իրավակարգավորումներին:

Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ Դիմողը խնդրում է. «(...) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 23 և 31, 61 և 63, 28 և 29, 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 1087.1-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթն՝ այնքանով, որքանով զրպարտության դեպքում, եթե զրպարտությունը տեղ է գտել սոցիալական ցանցի օգտահաշվում, անձին հնարավորություն չի տալիս սոցիալական ցանցի օգտատիրոջը պահանջ ներկայացնել օգտահաշվից հեռացնել զրպարտող տեղեկությունը և (կամ) հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը:

(...) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 23 և 31, 61 և 63, 28 և 29, 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի դրույթն՝ այնքանով, որքանով սոցիալական ցանցի օգտատիրոջը չի դիտարկում որպես լրատվական գործունեություն իրականացնող, իսկ սոցիալական ցանցի օգտահաշիվը չի դիտարկում որպես լրատվություն իրականացնելու միջոց»:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը, մեջբերելով Սահմանադրության 23, 28, 29, 31, 61, 63 և 75-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորումները և դրանց վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի նախադեպային դիրքորոշումները, գործող օրենսդրական կարգավորումները դիտարկելով դատական պրակտիկայի և միջազգային իրավակարգավորումների համատեքստում, նշում է. «(…) տվյալ դեպքում օրենսդրական բաց և օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործման խախտում առկա չեն»:

Պատասխանողի գնահատմամբ՝ օրենսդիրը տվյալ իրավակարգավորումները սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառ պրակտիկայի ձևավորում. «(…) այդպիսի ընթացակարգի սահմանումը եղել է օրենսդրի նպատակը»:

Պատասխանողը պնդում է, որ տվյալ դեպքում օրենքի բացը հաղթահարելու անհնարինություն առկա չէ, մասնավորապես, այն պայմաններում, երբ դատարաններին տրված դատական հայեցողության շրջանակներում՝ պայմանավորված յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքներով, կարող է քննարկման առարկա դառնալ սոցիալական ցանցի կոնկրետ օգտահաշվի (օգտահաշվի առանձնահատկություններով պայմանավորված)՝ որպես լրատվական միջոց հանդիսանալու հարցը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթը՝ իր իրավակարգավորիչ դերով, համապատասխանում է Սահմանադրությանը՝

չհանգեցնելով սահմանադրական իրավունքների արդյունավետ իրացման որևէ խոչընդոտի:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում լրատվական գործունեություն չիրականացնողի՝ համացանցում տարածած տեղեկատվության մեջ տեղ գտած զրպարտության դեպքում անձի կողմից դատական կարգով զրպարտություն համարվող փաստացի տվյալները հրապարակայնորեն հերքելու և (կամ) հրապարակայնորեն դրանց վերաբերյալ իր պատասխանը ներկայացնելու և (կամ) դրանք հեռացնելու պահանջ ներկայացնելու օրենսդրական հնարավորություն, համահունչ է Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված իրավունքին՝ հաշվի առնելով նաև Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի առկայության սահմանադրաիրավական պահանջը:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության՝ **«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները»** վերտառությամբ 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրության՝ **«Մարդու արժանապատվությունը»** վերտառությամբ 23-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունն անխախտելի է: Այսպիսով՝ **մար-**

դու արժանապատվությունը բացարձակ պաշտպանության ենթակա սահմանադրական արժեք է, որը կանխորոշում է մարդու իրավունքների և ազատությունների բովանդակությունը և ծավալը: Այս մասին է վկայում նաև այն, որ Սահմանադրության 203-րդ հոդվածի համաձայն՝ ի թիվս այլ հոդվածների, Սահմանադրության 3-րդ հոդվածը փոփոխման ոչ ենթակա հոդված է:

Սահմանադրական դատարանը, իր մի շարք որոշումներում անդրադառնալով «արժանապատվություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, մասնավորապես, նշել է.

- *«Վավերացնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է դրա Նախաբանի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից»: Սահմանադրության 3 հոդվածի 1-ին մասում նշված է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: «Բարձրագույն արժեք» հասկացությունն այստեղ վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում և՛ պետական, և՛ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել»* (2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշում),

- *«Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչը նրա արժանապատվությունն է, որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու և քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար: Այն նաև ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում և կամահայտնության դրսևորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն»* (2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-913 որոշում),

- *«Անձի արժանապատվության անխախտելիությունը, նրա պատվի և բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը վերաբերում են ոչ միայն մարդկային կյանքի ողջ ժամանակահատվածին, այլ պետությունը պարտավոր է ստեղծել նաև մահացած անձի*

պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտ իրավական երաշխիքներ» (2017 թվականի մարտի 21-ի ՍԴՈ-1358 որոշում):

Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1621 որոշման շրջանակներում նշել է. *«(…) Սահմանադրության 3-րդ հոդվածը,* ***մարդուն հռչակելով որպես բարձրագույն արժեք, վերջինիս արժանապատվությունը դիտարկում է որպես սահմանադրական արժեհամակարգի հիմնաքար՝*** *հանրային իշխանությանը պարտավորեցնելով ապահովել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը՝ միաժամանակ սահմանափակելով հանրային իշխանությանը՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»*:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը արձանագրում է, որ **սահմանադրաիրավական կարգավորումների հիմքում մարդու արժանապատվությունն է, որի վրա խարսխվում են վերջինիս հիմնական իրավունքներն ու ազատությունները: Այն կանխորոշում է հիմնական իրավունքների և ազատությունների թե՛ բովանդակությունը, թե՛ իրացման սահմանները, հետևաբար՝ մարդու արժանապատվության գերակայության գաղափարը պետք է ընկած լինի ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության հիմքում:**

5.2. Մարդու արժանապատվության արժեբանական հիմունքներն արտացոլվել են նաև Սահմանադրության՝ **«Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը»** վերտառությամբ 31-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, *պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:*

Մարդու արժանապատվության, դրա անբաժանելի մաս կազմող պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի հարգումն ու պաշտպանությունն իրավական պետության ելակետային հատկանիշներից են և հասարակական արժեհամակարգի կարևորագույն բաղադրատարրերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշումների համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի իմաստով «մասնավոր կյանքը» լայն հասկացություն

է, որը տարածվում է անձնական ինքնության հետ կապված մի շարք ասպեկտների վրա, ինչպիսիք են անձի անունը կամ համբավը, և, բացի դրանից, ներառում է անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը: Եվրոպական դատարանը նաև ճանաչել է, որ անձի՝ իր բարի համբավը պաշտպանելու իրավունքն ամրագրված է 8-րդ հոդվածում՝ որպես մասնավոր կյանքը հարգելու իրավունքի մաս (տե՛ս Høiness v. Norway, Application no. 43624/14, 19.03.2019, Final 19.06.2019, §63):

Մարդու արժանապատվության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական կարևորության մասին է վկայում նաև Սահմանադրի կողմից սույն արժեքների նկատմամբ անվերապահ հարգանք և պաշտպանություն ապահովող կարգավորումների ամրագրումը, մասնավորապես այն, որ **Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ կարծիքի արտահայտման ազատության՝ նույն հոդվածի 3-րդ մասով՝ սահմանափակման իրավաչափ նպատակ է դիտարկում այլոց պատվի ու բարի համբավի պաշտպանությունը:**

Այսպես՝ Սահմանադրության՝ «Կարծիքի արտահայտման ազատությունը» 42-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է յուրաքանչյուրի կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, որը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Կարծիքն ազատ արտահայտելու իրավունքն ընկած է ժողովրդավարական հասարակության հիմքում: Այն ժողովրդավարական հասարակության, ինչպես նաև յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական պայմաններից մեկն է:

2017 թվականի դեկտեմբերի 26-ի ՍԴՈ-1396 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ *«(…) արտահայտվելու ազատությունը ոչ միայն մարդու իրավունքների ու ազատությունների, այլև հանրային շահերի համակարգում սկզբունքային կարևորության բաղադրիչ է, որի երաշխավորումը սահմանադրաիրավական և միջազգային իրավական պահանջ է»:*

Այդուհանդերձ, կարծիքի արտահայտման ազատությունը չի կարող լինել բացարձակ և պետք է ներդաշնակ հավասարակշռվի հասարակության ու պետության կենսա-

կան շահերի, ինչպես նաև մարդու այլ հիմնարար իրավունքների հետ, ուստի՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ երկու սահմանադրական արժեքների՝ պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության և կարծիքի արտահայտման ազատության **հավասարակշռման միջոց է** սահմանադրորեն նախատեսված իրավաչափ նպատակով, այն է՝ ***այլոց պատվի ու բարի համբավի պաշտպանության նկատառումներից ելնելով՝ կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման հնարավորությունը*** (Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մաս):

Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի հոկտեմբերի 5-ի ՍԴՈ-1612 որոշմամբ որպես ***կարծիքի ազատ արտահայտման իրավունքի իրականացման բովանդակային սահման է նշել մարդու արժանապատվության, պատվի ու բարի համբավի պաշտպանության անհրաժեշտությունը,*** իսկ 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1646 որոշմամբ արձանագրել է, որ *«(...) ժողովրդավարական հասարակության մեջ կարծիքի արտահայտման ազատությունը չի պաշտպանում անձի արժանապատվությունը նսեմացնելու նպատակ հետապնդող անվայելուչ, անպարկեշտ խոսքը, ինչպես նաև անձի հանդեպ բացահայտ անպարկեշտ՝ հասարակության մեջ ընդունված բարոյական նորմերին հակասող վարքագիծը և անձի մարդկային արժանապատվությունը նսեմացնելուն նպատակադրված այլ ձևերը»:*

Այսպիսով, Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ կարծիքի արտահայտման ազատության իրացման բովանդակային սահմանները որոշելու հարցում էական, որոշիչ նշանակություն ունի Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված անձի պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի երաշխավորումը:

Ողջ վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ *մի կողմից*՝ ամրագրելով անձի կարծիքի արտահայտման ազատությունը, *մյուս կողմից*՝ սահմանադրական պաշտպանության ներքո ընդգրկելով անձի արժանապատվության անքակտելի մաս կազմող պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը՝ ***հանրային իշխանությունը կրում է սահմանադրաիրավական պարտականություն՝ հավասարակշռել հիշատակված երկու սահմանադրահեն արժեքները, ապահովել դրանց պաշտպանության արդյունավետ իրավական կառուցակարգերի կենսունակությունը:***

5.3. Սահմանադրության 75-րդ հոդվածն ամրագրում է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության վերոնշյալ պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ և իրական կենսագործմանը, քանի որ իրավունքի կամ ազատության սոսկ ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար, **ուստի՝ համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու հարցում:**

Սահմանադրական դատարանը, նախկինում անդրադառնալով սույն սահմանադրաիրավական պահանջի բովանդակությանը, հայտնել է հետևյալ դիրքորոշումները.

«Սահմանադրության վերոնշյալ պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ և իրական կենսագործմանը, քանի որ իրավունքի կամ ազատության միայն ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար, ուստի համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու հարցում» (2021 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴՈ-1618 որոշում):

«(…) Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությունից անմիջականորեն բխում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ օրենքով սահմանելու իրավունքի պաշտպանությանը միտված իրավական այնպիսի միջոցներ, որոնք կապահովեն անկախ, անաչառ և մատչելի արդարադատության միջոցով անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ, արդար պաշտպանություն՝ ինչպես գործի ըստ էության քննության, այնպես էլ դատական ակտերի հետագա բողոքարկման շրջանակներում:

(…)

Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջն է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Հետևաբար, այս տեսանկյունից Սահմանադրական դատարանը կարևորում է ոչ միայն իրավունքի իրացման կարգի օրենքով նախատեսման փաստը սոսկ, այլև նման կարգի արդյունավետությունը, այսինքն՝ օրենքի նորմերում բովանդակվող իրավակարգավորիչ այնպիսի միջոցների, ձևերի առկայությունը և դրանց գործադրման հնարավորությունը, որոնք կերաշխավորեն սահմանադրորեն կանխորոշված նպատակի լիարժեք իրացումը՝ կոնկրետ դեպքում հաշվի առնելով նաև Սահմանադրության 78, 79, 80 և 81-րդ հոդվածների պահանջները» (2018 թվականի հունիսի 19-ի ՍԴՈ-1420 որոշում):

Սահմանադրական դատարանը, 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման մեջ անդրադառնալով Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությանը, արձանագրել է, որ *«(…) ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) արդյունավետ իրականացման համար (2) անհրաժեշտ (3) կազմակերպական (4) կառուցակարգեր և (5) ընթացակարգեր: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը»:*

2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանն արձանագրել է. *«Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները»:*

Սահմանադրական դատարանը հայտնում է, որ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությունը հանրային իշխանության սահմանադրաիրավական պարտականությունն է. հանրային իշխանությունը կրում է պարտականություն՝ ապահովել պաշտպանության ենթակա նշված իրավունքի նկատմամբ **համակողմանի հարգանք և պաշտպանություն ապահովող արդյունավետ օրենսդրական կառուցակարգեր,** առանց որոնց հիշատակված սահմանադրական իրավունքը կկրի հռչակագրային բնույթ:

5.4. Այսպիսով, հանրային իշխանությունը պետք է երաշխավորի մարդու իրավունքների և ազատությունների ամբողջական և լիարժեք պաշտպանությունը, ի թիվս այլնի, նաև արդարադատության իրականացման բացառիկ առաքելություն ունեցող դատական համակարգի միջոցով՝ ապահովելով արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների կենսագործման համար անհրաժեշտ կառուցակարգեր:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ *օրենսդիրը, հաշվի առնելով մարդու արժանապատվության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության դատական կարգով պաշտպանության առանցքային նշանակությունը, ի թիվս այլնի, նաև քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսել է սույն սահմանադրաիրավական արժեքների երաշխավորմանը միտված կարգավորումներ:*

Մասնավորապես՝ Օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին կետի ուժով՝ անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են, ի թիվս այլնի նաև՝ դատական պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ Օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում և կարգով: Հիշատակված կարգավորմանը համահունչ՝ Օրենսգրքի՝ **«Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները»** վերտառությամբ 1087.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

Օրենսգրքի վերոնշյալ հոդվածը սահմանում է վիրավորանքի և զրպարտության օրենսդրական սահմանումները, համաձայն որոնց.

- ***վիրավորանքը*** խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է (Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 2-րդ մաս),

- ***զրպարտությունն*** անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը (Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 3-րդ մաս):

Անդրադառնալով «զրպարտություն» հասկացության իրավական բովանդակությանը՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշման շրջանակներում արձանագրել է, որ.

«Այս ձևակերպումից բխում է, որ զրպարտությանը բնորոշ հատկանիշներն են.

ա/ խոսքը վերաբերում է փաստացի տվյալներին,

բ/ դրանք չեն համապատասխանում իրականությանը,

գ/ ներկայացվել են հրապարակայնորեն,

դ/ արատավորում են անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը,

ե/ դրանք չեն վերաբերում միայն լրատվամիջոցներով ներկայացված փաստացի տվյալներին»:

Ինչ վերաբերում է զրպարտության՝ անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավն *արատավորող բնույթ* ունենալու իմպերատիվ պահանջին, ապա Սահմանադրական դատարանը հայտնում է, որ արատավորող կարող են լինել իրականությանը չհամապատասխանող՝ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը նսեմացնող այնպիսի տվյալները, որոնք բովանդակում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման,

տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ տեղեկություններ, որոնք չեն հիմնավորվում թույլատրելի և վերաբերելի ապացույցներով:

Օրենքի միատեսակ կիրառության սահմանադրահիրավական պատվիրանի կենսագործման շրջանակներում Վճռաբեկ դատարանն իր նախադեպային պրակտիկայում սահմանել է կոնկրետ արտահայտությունը՝ որպես զրպարտություն գնահատելու համար հստակ չափանիշներ, որոնք են.

1. անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ, այսինքն՝ ներկայացվածն իր մեջ պետք է պարունակի կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական,

2. անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային[1],

3. ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի,

4. ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը *(տե՛ս, օրինակ, Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի ապրիլի 27-ի որոշումը):*

5.5. Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով վիրավորանքի և զրպարտության դեպքում օրենսդրորեն նախատեսված ***իրավական պաշտպանության միջոցներին***՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 7-րդ մասը սահմանում է անձի կողմից ***վիրավորանքի դեպքում***

---

[1] Վճռաբեկ դատարանի ձևավորած պրակտիկայի համաձայն՝ հրապարակային արտահայտությունը կամ հրապարակային ներկայացումը կարող է դրսևորվել տպագրության միջոցով, ռադիոյի կամ հեռուստատեսության միջոցով հեռարձակմամբ, զանգվածային լրատվության միջոցներով տարածմամբ, **համացանցի միջոցով տարածմամբ,** ինչպես նաև հեռահաղորդակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներով կամ որևէ այլ կերպ թեկուզ մեկ երրորդ անձի դրանց հաղորդակից դարձնելով (*տե՛ս Վճռաբեկ դատարանի 27.04.2012 թ. թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով որոշումը):*

դատական կարգով հայցվող պաշտպանության միջոցները (անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը), ինչպիսիք են՝

1) հրապարակայնորեն ներողություն խնդրելը (ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը),

2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով դատարանի վճիռը լրիվ կամ մասնակի հրապարակելը (հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը),

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարելը:

Իսկ վիճարկվող դրույթի՝ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ***զրպարտության դեպքում*** անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ պաշտպանության միջոցները (մեկը կամ մի քանիսը).

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն զրպարտություն համարվող փաստացի տվյալները հերքելը և (կամ) դրանց վերաբերյալ իր պատասխանի հրապարակումը (հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով),

2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարելը[2]:

Այսպիսով՝ օրենսդիրը, հաշվի առնելով, որ զրպարտությունը ենթադրում է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվության հրապարակային ներկայացում, ինչպես նաև ելնելով պատվի, արժանապատվության և գործարար (բարի) համբավի սահմանադրահիրավական բովանդակությունից, որպես զրպարտության դեմ առավել արդյունավետ պաշտպանության միջոց, նախատեսել է այնպիսի *հատուկ իրավական միջոցներ, ինչպիսիք են նման տեղեկատվության հերքումը և (կամ) դրանց վերաբերյալ պատասխանի հրապարակումը,* **որոնք, սակայն, օրենսդիրը հնարավոր է համարել**

[2] Գործող կարգավորմամբ սահմանվել է սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 6000-ապատիկի չափով փոխհատուցում:

բացառապես այն պարագայում, եթե հրապարակումը տեղ է գտել *լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ:* Միայն այդ դեպքում անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել է, կարող է լրատվության համապատասխան միջոցով (որով տարածվել են զրպարտություն համարվող տվյալները) հրապարակայնորեն հերքում և (կամ) զրպարտություն համարվող փաստացի տվյալների վերաբերյալ իր պատասխանի հրապարակում պահանջել: ***Ընդ որում՝ գործող օրենսդրական կարգավորումների ուժով զրպարտություն համարվող տվյալների հերքումը և (կամ) պատասխանի հրապարակումը թեև կիրառելի են նաև սոցիալական ցանցերում՝ առցանց հարթակներում արված հրապարակումների դեպքում, այդ թվում՝ սոցիալական ցանցերի մեկնաբանությունների տիրույթում հնչեցրած արտահայտությունների առնչությամբ, սակայն միայն այն դեպքում, երբ զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության շրջանակներում:*** Հակառակ դեպքում, երբ նման տեղեկատվությունը տարածվել է լրատվական գործունեություն չիրականացնող անձի համացանցային կայքի, այդ թվում՝ սոցիալական ցանցերում գործող անձնական օգտահաշվի միջոցով, գործող իրավակարգավորումների պայմաններում չի կարող խոսք լինել զրպարտություն համարվող փաստացի տվյալների հերքման և (կամ) դրանց վերաբերյալ պատասխանի հրապարակման պահանջի մասին: *Օրենսդիրն առհասարակ չի նախատեսել զրպարտություն հանդիսացող տվյալների (տեղեկատվության)՝ համացանցային կայքից* ***հեռացման օրենսդրական հնարավորություն,*** *այդ թվում նաև՝ համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող զանգվածային լրատվության միջոցով նման տեղեկատվության տարածման պարագայում:*

Վերոգրյալի առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև **Վճռաբեկ դատարանի** ձևավորած պրակտիկային, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի իրավակարգավորումները կիրառելի են բացառապես այն դեպքում, երբ զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է.

«Տվյալ դեպքում օրենսդիրը նախատեսել է, որ անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը հատուցվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան, որի համաձայն՝ անձը, ում պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ: Անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին զրպարտության միջոցով վնաս պատճառված լինելու դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել ինչպես հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը, այնպես էլ՝ վճարել սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով փոխհատուցում: Ընդ որում, վերը նշված միջոցներից առաջինն անձը կարող է պահանջել ***բացառապես այն դեպքում, երբ զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, այսինքն՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով այն իրավաբանական կամ ֆիզիկական անձի, այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ, որն իր անունից լրատվության միջոցով, այդ թվում նաև՝ սոցիալական ցանցերում, առցանց հարթակներում, տարածել է այդ տեղեկատվությունը:***

(...)

Տվյալ դեպքում պատասխանող Մանե Գևորգյանը վերը նշված հրապարակումը «Facebook» համացանցային կայքում իրականացրել է ոչ թե որպես լրատվական գործունեություն իրականացնող, այլ՝ որպես այդ կայքի օգտատեր և իր անձնական էջում՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով չհանդիսանալով ինչպես լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, այնպես էլ՝ անհատ ձեռնարկատեր, իսկ այդ հրապարակումն էլ չի տարածվել նույն օրենքի իմաստով լրատվության միջոցով: Վճռաբեկ դատարանի նման եզրակացությունը պայմանավորված է նրանով, որ Մանե Գևորգյանի վերը նշված անձնական էջը չի համապատասխանում «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով լրատվության միջոցին առաջադրվող պահանջներին» (տե՛ս թիվ ԵԴ/16144/02/20 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունիսի 10-ի որոշումը):

Ողջ վերոշարադրյալի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **զրպարտության օրենսդրական սահմանումը, ինչպես նաև դրա տարածման եղանակներն ավելի լայն են, քան դրա դեմ օրենքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցների շրջանակը:** Զրպարտության օրենսդրական սահմանումից հետևում է, որ *զրպարտող կարող է հանդիսանալ* ***յուրաքանչյուր ոք***, ինչը ենթադրում է, որ կոնկրետ անձի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալների (statement of fact) հրապարակային ներկայացման դեմ պաշտպանության միջոցները պետք է ուղղված լինեն անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանությանը՝ ***անորոշ թվով անձանցից***, մինչդեռ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի իմաստով անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել է, կարող է դատական կարգով պահանջել զրպարտություն համարվող փաստացի տվյալների հերքում և (կամ) դրանց վերաբերյալ իր պատասխանի հրապարակում բացառապես այն պարագայում, երբ զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ:

5.6. Օրենսգրքի վիճարկվող դրույթը դիտարկելով համացանցի՝ տեխնոլոգիաների ներկայիս զարգացման փուլում հասարակության լայն շրջանակների կողմից որպես տեղեկատվության ստացման, տեղադրման և փոխանակման աղբյուրի ընկալման լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

տեխնոլոգիաների զարգացման աճն ու դրանով պայմանավորված՝ հասարակական հարաբերությունների սրընթաց զարգացումը, նպաստել են համացանցի՝ որպես համընդհանուր տարածում և ճանաչում ունեցող տեղեկատվության ստացման, տեղադրման և փոխանակման աղբյուրի վերածմանը: Համացանցը գլոբալ, համաշխարհային տեղեկատվական համակարգ է, որը միավորում է բազմաթիվ օգտատերերի ամբողջ աշխարհում: Ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ տեղեկատվությունը համացանցում ավելի արագ է տարածվում, քան սովորական (ավանդական) զանգվածային լրատվության միջոցներում. այն փոխանցվում է տարբեր ձևերով, տարբեր ծավալներով, անկախ հեռավորություններից և պետական սահմաններից՝ հաշված րոպեների ընթացքում հասանելի դառնալով **անորոշ (անսահմանափակ) թվով անձանց և, բացի դրանից, այդ եղանակով տարածվող տեղեկատվությունն ունի վերահսկելիության**

ավելի ցածր աստիճան և այդ տիրույթում մշտապես մնալու մեծ հավանականություն:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով զրպարտություն համարվող և այլ՝ ակնհայտորեն ոչ իրավաչափ խոսքի՝ համացանցում տարածմանը, իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ՝ *«(…) օգտատերերի կողմից համացանցում արտահայտչական գործունեության ծավալումն արտահայտվելու ազատության* ***աննախադեպ հնարավորություն է ստեղծում****: Սա անվիճելի է և նախկինում այլ առիթների ժամանակ Դատարանի կողմից արդեն ճանաչվել է (տե՛ս Ahmet Yildirim-ն ընդդեմ Թուրքիայի, թիվ 3111/10, § 48, ՄԻԵԴ 2012, և Times Newspapers Ltd-ն (թիվ 1 և թիվ 2) ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 3002/03 և թիվ 23676/03, § 27, ՄԻԵԴ 2009): Սակայն այս առավելությունների հետ մեկտեղ որոշակի վտանգներ ևս կարող են ստեղծվել: Զրպարտիչ և այլ՝ ակնհայտորեն ոչ իրավաչափ խոսքը, այդ թվում նաև՝ ատելության խոսքը և բռնության հրահրող կոչերը, կարող են վայրկյանների ընթացքում աշխարհով մեկ տարածվել ավելի արագ, քան նախկինում երբևէ տարածվել են, իսկ երբեմն նույնիսկ կայուն մնալ համացանցում: Այս երկու միմյանց հակասող իրականություններն ընկած են այս գործի հիմքում: Գիտակցելով Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքների պաշտպանության անհրաժեշտությունը և հաշվի առնելով այն, որ Կոնվենցիայի 8 և 10-րդ հոդվածներով ամրագրված իրավունքներն արժանի են հավասար հարգանքի, անհրաժեշտ է այս երկուսը հավասարակշռել այնպես, որ դրանց էությունը պահպանվի: Այսպիսով, չնայած Դատարանը ճանաչում է այն հանգամանքը, որ խոսքի ազատության իրացման տեսանկյունից համացանցը կարևոր առավելություններ է տալիս, այն նաև հաշվի է առնում, որ զրպարտիչ կամ այլ անօրինական բովանդակության համար պատասխանատվությունը պետք է սկզբունքորեն պահպանվի և հանդիսանա անձնական իրավունքների խախտման համար արդյունավետ միջոց» (տե՛ս Delfi AS v. Estonia, Application no. 64569/09, 16.06.2015, §110)*[3]*:*

Նման պայմաններում Օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորումների ուժով պատվի, արժանապատվության և գործարար համբավի իրավական պաշտպանությու-

[3] Հասանելի է https://hudoc.echr.coe.int/eng?i=001-162655 հղմամբ:

նը զրպարտություն պարունակող տեղեկատվությունից, որը տեղ է գտել ***1)*** համացանցային կայքում, որը գրանցված է որպես զանգվածային լրատվության միջոց, և ***2)*** համացանցային կայքում, որը գրանցված չէ որպես այդպիսին (օրինակ՝ համացանցային կայքի օգտատիրոջ անձնական օգտահաշվում), և տարբերվում է՝ ***չնայած այն հանգամանքին, որ հրապարակային հարթակում իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալների ներկայացման արդյունքում անձի համար առաջացած փաստական հետևանքները երկու պարագայում էլ գրեթե նույնական են:*** Այլ կերպ՝ այն դեպքում, երբ զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալների տարածողը լրատվական գործունեություն իրականացնող չէ, **ապա դատական կարգով պաշտպանության՝ ոչ նյութական միջոցի կիրառման պահանջ ներկայացնելու և այդպիսի պահանջի բավարարում ստանալու օրենսդրական գործիքակազմը բացակայում է:**

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ զրպարտության միջոցով անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի դեմ կատարված ոտնձգության պայմաններում **լոկ նյութական հատուցման տրամադրման կառուցակարգերը բավարար չեն:** Խնդրո առարկա իրավունքին նման կերպ *ոտնձգելու պարագայում, երբեմն ոտնձգողի (անկախ սուբյեկտի) կողմից ոչ նյութական հատուցման միջոցով է հնարավոր ապահովել դրանց պաշտպանության արդյունավետությունն ու համարժեքությունը*: Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի *պաշտպանությունը երբեմն ենթադրում է ոչ նյութական հատուցման եղանակի կիրառում, որպիսի պարագայում է միայն հնարավոր լինում ապահովել դրա արդյունավետությունն ու լիարժեքությունը: Ամեն դեպքում* «տուժող կողմը» պետք է միշտ հնարավորություն ունենա ինքը որոշելու իրավունքի պաշտպանության որ եղանակն ու միջոցն ընտրի՝ ելնելով իր արժանապատվության, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի վերաբերյալ սեփական վերաբերմունքից ու պատկերացումից:

5.7. Տվյալ դեպքում, գործի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողի պատիվը և արժանապատվությունն արատավորող հրապարակումը տեղ է գտել ֆիզիկական անձ «Marina Poghosyan»-ի ֆեյսբուքյան էջի (անձնական օգտահաշվի) միջոցով, որը, ըստ խնդրո առարկա քաղաքացիական

գործի նյութերի, չի հիմնավորվել, որ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի իմաստով զանգվածային լրատվության միջոց է, իսկ նշյալ օգտահաշվի օգտատերը՝ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, ուստիև՝ նշված **տեղեկության հրապարակային ներկայացումը չի համարվել լրատվության միջոցով իրականացված:**

Վերոշարադրյալի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Facebook» սոցիալական մեդիա հարթակն առցանց ծառայություն է, որը հնարավորություն է տալիս ստեղծել օգտահաշիվ, տեղադրել տեղեկատվություն և այլն: Վերջինս հասարակության լայն շրջանակներում ընկալվում է որպես զանգվածային լրատվության միջոցներին փոխարինող այլընտրանքային տեղեկատվության աղբյուր, բայց միևնույն ժամանակ **այդ հարթակում տեղեկատվություն տեղադրող և տարածող ամեն ոք չէ, որ լրատվական գործունեություն իրականացնող է, հետևաբար՝ համացանցում տեղեկատվության տարածման աղբյուր (սուբյեկտ) են հանդիսանում ոչ միայն լրատվական գործունեություն իրականացնողները, այլ նաև ցանկացած անձ, որն ազատ է թե՛ լրատվական գործունեություն իրականացնողների կողմից տեղադրված/տարածված տեղեկատվության՝ իր անձնական էջերում տնօրինման (մասնավորապես՝ իր անձնական էջում հրապարակելու/կիսվելու, խորագրելու, մեկնաբանություններ անելու), թե՛ սեփական տեղեկատվության տեղադրման, դրա տարածման հարցում:** Ավելին, որոշ դեպքերում մասնավոր անձանց կողմից վարվող բազմաթիվ օգտահաշիվներ ներկայումս ապահովում են **ավելի մեծ դիտելիություն և տեղեկատվության ավելի արագ տարածում, քան առանձին զանգվածային լրատվության միջոցներ:**

Այս առնչությամբ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ *չի անտեսում այն դյուրինությունը, ընդարձակ տարածման հնարավորությունները և արագությունը, որով տեղեկատվությունը կարող է տարածվել համացանցով, այդ թվում նաև՝ մեկ անգամ արդեն բացահայտված տեղեկատվության անընդհատ առկայությունը համացանցում, ինչը կարող է ծանրացնել ոչ իրավաչափ խոսքի հասցրած վնասի հետևանքները համացանցի միջոցով տարածման դեպքում,* ***որը շատ ավելի ծանր է, քան կարող էր լինել***

ավանդական մամուլի դեպքում *(տե՛ս Delfi AS v. Estonia, Application no. 64569/09, 16.06.2015, §147)*[4]*:*

Ողջ վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ անձի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող հրապարակային ներկայացված **փաստացի տվյալները** *(անկախ դրանք հրապարակող սուբյեկտի, քանի դեռ դրանք հրապարակային հարթակում են)* ***հերքելու և (կամ) դրանք հեռացնելու օրենսդրական հնարավորության բացակայությունը հանգեցնում է անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի շարունակական արատավորման, իմաստազուրկ է դարձնում զրպարտության դեպքում Օրենսգրքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցների գործնականում կիրառելիությունն ու դրանց արդյունավետությունը:*** *Մինչդեռ հիմք ընդունելով այն, որ անձի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավը ոչ նյութական բարիքներ են, որպես դրանց պաշտպանության առաջնահերթ ձև՝ պետք է սահմանված լինի ոչ նյութական պահանջը:* Այդ մասին է փաստում նաև Սահմանադրական դատարանն իր՝ 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշման շրջանակներում՝ նշելով, որ *«(…) արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը»:*

Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ոչ **նյութական արժեքներին վնաս հասցվելու պայմաններում, որպես առաջնահերթություն, ոչ նյութական վնասի հատուցման միջոցների կիրառման իմպերատիվ պահանջի հիմքում ընկած է այն ողջամիտ տրամաբանությունը, որ ոչ նյութական արժեքին վնաս պատճառելիս բացառապես նյութական հատուցում տրամադրելը չի կարող հանդիսանալ անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի դեմ ոտնձգությանը համարժեք պատասխանատվություն, քանի որ չի կարող համարժեքորեն փոխհատուցել (վերականգնել) անձի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասը:**

[4] Հասանելի է https://hudoc.echr.coe.int/eng?i=001-162655 հղմամբ:

5.8. Սույն գործի նյութերի ուսումնասիրության համաձայն՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը թիվ ԵԴ/9074/02/19 քաղաքացիական գործով իր՝ 22.03.2023 թ. որոշմամբ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով սահմանված պաշտպանության միջոցի կիրառման անհնարինության առնչությամբ նշել է հետևյալը.

«(...) սույն գործի քննության ընթացքում ֆեյսբուքյան օգտատեր «Marina Poghosyan»-ի լրատվական գործունեությամբ զբաղվելու փաստը ապացուցված չլինելու պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ***վեճի առարկա հրապարակումը տեղի է ունեցել ֆիզիկական անձ «Marina Poghosyan»-ի ֆեյսբուքյան էջի միջոցով, որը չի կարող գնահատվել որպես լրատվության միջոց՝*** *Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված տեղեկությունը չի կարող համարվել լրատվության միջոցով տարածված:*

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով սահմանված պաշտպանության միջոցի կիրառման հիմքը: Հետևաբար՝ այս առնչությամբ բողոքաբերի պատճառաբանությունները Վերաքննիչ դատարանի գնահատմամբ անհիմն են»:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ զրպարտություն հանդիսացող տվյալները (*անկախ հրապարակող սուբյեկտից*) **հրապարակային հարթակում (համացանցում) հասանելիության պայմաններում հերքելու և (կամ) դրանք հեռացնելու պահանջ ներկայացնելն անհնար է**, այդպիսի օրենսդրական կարգավորումը չի ապահովում Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված պահանջների արդյունավետ կենսագործումը՝ որպես հետևանք հանգեցնելով անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների խախտման՝ անձի արժանապատվության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության երաշխավորման համատեքստում:

Սահմանադրական դատարանը հայտնում է նաև, որ համացանցում հրապարակային ներկայացված տեղեկատվության **հերքումը և (կամ) հեռացումը** ոչ թե նույնական, այլ պաշտպանության **անկախ և ինքնավար միջոցներ են, և որոշ դեպքերում** համացանցում հրապարակային ներկայացված զրպարտություն հանդիսացող տեղեկատվությունը **հեռացնելը** կարող է անձի **պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանելու** առավել արդյունավետ միջոց հանդիսանալ՝

կանխելով զրպարտության շարունակական տարածումը և նման տեղեկատվության դիտումները համացանցում: Մինչդեռ օրենսդիրն **առհասարակ չի նախատեսել զրպարտություն պարունակող նյութը հեռացնելուն պարտավորեցնելու իրավական հնարավորություն**:

Վերոգրյալի առնչությամբ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ **պետք է գործեն անհրաժեշտ կազմակերպական այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կապահովեն անձի նկատմամբ իրականությանը չհամապատասխանող և նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալների (statement of fact) ներկայացման պայմաններում (անկախ դրանք ներկայացրած սուբյեկտի) դրանք հրապարակայնորեն հերքելու և (կամ) դրանց վերաբերյալ իր պատասխանը հրապարակելու և (կամ) դրանք հեռացնելուն պարտավորեցնելու հնարավորությունը, քանզի նման հնարավորության բացակայությունը հակասում է Սահմանադրության 31 և 75-րդ հոդվածներին:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասն այնքանով, որքանով լրատվական գործունեություն չիրականացնողի կողմից համացանցում տարածված զրպարտության դեպքում շահագրգիռ անձի համար չի նախատեսում զրպարտությունը հերքելու, դրա պատասխանը ներկայացնելու, այն հեռացնելու կամ վերը նշված կարգավորումներին համարժեք այլ հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 31-րդ հոդվածին (75-րդ հոդվածի հետ համակցությամբ) հակասող և անվավեր:

2. Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասը՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական

դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

1 հոկտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1752